ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

09 հոկտեմբերի 2013թ. N----------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԼԵՎՈՆ ԻԳԻԹՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Երևան քաղաքի 2795-րդ տարեդարձի կապակցությամբ, ազգային ճարտարապետության և մշակույթի զարգացման գործում ունեցած մեծ ավանդի համար «Գեղագիտության ազգային կենտրոն» ՊՓԲԸ գլխավոր տնօրեն, Հայաստանի Հանրապետության մշակույթի վաստակավոր գործիչ, ճարտարապետ Լևոն Իգիթյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԼԵՎՈՆ ԻԳԻԹՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Լևոն Սուրենի Իգիթյանը ծնվել է 1939 թվականի, հունվարի 1-ին։

1956 թվականին ավարտել է Երևանի հ.12 միջնակարգ դպրոցը։

1959 թվականին ընդունվել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետական բաժինը։ Ուսանելու հետ միաժամանակ աշխատել է «Հայպետնախագիծ» ինստիտուտում։

1957-1958թթ. աշխատել է «Երևանկաբել» գործարանում։

1958-1959թթ. աշխատել է «Արմժիլգրաժդանպրոյեկտ» ինստիտուտում։

1966 թ. ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարագիտական բաժինը։

1969-1977թթ.՝ «Երևաննախագիծ» ինստիտուտի ճարտարապետ, խմբի ղեկավար, սեկտորի պետ։

1977-1985թթ. եղել է Հայաստանի ճարտարապետների միության պատասխանատու քարտուղար, համատեղությամբ՝ «Երևաննախագիծ» ինստիտուտում՝ որպես խմբի ղեկավար։

1974-1986թթ. եղել է Հանրապետության ստեղծագործ երիտասարդների խորհրդի նախագահ։

1979-1991թթ. եղել է ԽՍՀՄ ճարտարապետների միության վերստուգիչ հանձնաժողովի անդամ։

1986-2000թթ. աշխատել է Հայաստանի Պետշինի /ներկայումս ՀՀ քաղաքաշինության նախարարություն/ բաժնի վարիչ, վարչության պետ։

2000-2004թթ. եղել է Երևանի քաղաքապետարանի քաղաքաշինության խորհրդի քարտուղարը։

2006-2008թթ. եղել է ճարտարապետության բնագավառում ՀՀ Պետական մրցանակների հանձնաժողովի նախագահ։

1974-2007թթ. եղել է Հայաստանի Ճարտարապետների միության վարչության անդամ։

2012 թվականին արժանացել է Հայաստանի Հանրապետության մշակույթի վաստակավոր գործչի կոչման։

Ներկայումս աշխատում է «Նարեկ Սարգսյան» ճարտարապետական արվեստանոցում։

2009 թվականին և 2013 թվականին ընտրվել է Երևան քաղաքի ավագանու անդամ։

Հայաստանի Հանրապետության մշակույթի վաստակավոր գործիչ, ճարտարապետ Լևոն Իգիթյանը նախագծել է հասարակական, բնակելի հուշարձանային օբյեկտներ, ինչպես նաև իրականացրել է շուրջ 40 հուշարձանային նախագծերի և 100 գրքի ձևավորման աշխատանքներ։

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԼԵՎՈՆ ԻԳԻԹՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Լևոն Իգիթյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԼԵՎՈՆ ԻԳԻԹՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Լևոն Իգիթյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ եվ/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ